ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ծ. Պ. ԱՂԱՅԱՆ, Հոկտեմբերը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը, *Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1982, 414 էջ։*

Ակադեմիկոս Ծ. Պ. Աղայանը պատկանում է մեր այն պատմաբանների թվին, որոնք լուրջ ուշադրություն են դարձրել հայ ժողովրդի ազատագրական պայքարի ուսումնասիրությանը և այդ հարցին նվիրված առանձին մենագրություններ հրատարակել։ Դեռ 1976 թ. հրատարակվեց նրա «Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից» խորագիրը կրող մեծածավալ աշխատությունը, իսկ անցյալ տարի լույս տեսավ Ծ. Աղայանի «Հոկտեմբերը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը» մենագրությունը, որն ամբողջապես նվիրված է մեծ Հոկտեմբերից հետո Հայաստանում ծավալված ազատագրական պայքարին։ Դա դեպքերով ու իրադարձություններով խիստ հարուստ, բայց և բավականին բարդ մի ժամանակաշրջան էր, երբ եղեռն ու գաղթ տեսած արևմտահայության վերջին բեկորները իրենց արևելահայ եղբայրների հետ միասին ստիպված էին զերմարդկային ճիգեր գործադրել մի կողմից դարավոր ոսոխի՝ Թուրք բարբարոսների առաջն առնելու և գոյատևելու իրենց իրավունքը վաստակելու համար, իսկ մյուս կողմից՝ պայքարելու երկրում սովետական կարգերի հաստատման համար, որի մեջ էին տեսնում իրենց միակ փրկությունը։

Սրն Հայաստանում սովետական կարգերի հաստատման պատմությունը մեզանում բավականաչափ ուսումնասիրված է (թեև այստեղ էլ դեռևս բավական անելիքներ կան), ապա 1918—1920 թթ. Թուրքական ագրեսիայի դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի պատմության մասին այդ նույնն ասել չենք կարող։ «Երզնկայի, Էրզրումի, Սարիղամիշի, ապա Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի, Զանգեզուրի, այնուհետև Կիլիկիայի ազատագրական հերոսամարտերը դեռևս պատշաճ մակարդակով չեն ուսումնասիրվել,—գրում է հեղինակը։— Կասկածից վեր է հայ ժողովրդի պատմության այդ փառապանծ էջերի գիտական խոր ուսումնասիրության և բազմակողմանի լուսաբանության հրատապ անհրաժեշտությունը» (էջ 5)։ Չհամաձայնել հեղինակի այս տողերի հետ, չենք կարող։ Իրոք որ այստեղ մեր պատմաբանները դեռևս լուրջ անելիքներ ունեն, այդ շրջանի պատմության շատ մութ ծալքեր դեռ կարոտ են ուսումնասիրության, դեռ չեն բացահայտված, չեն լուսաբանված։ Գիտակցելով այս, հեղինակը ձեռնարկել է սույն գործը և բավական հաջողությամբ կատարել իր առաջ դրված խնդիրները։ Ճիշտ է, սրանով բոլոր հարցերը չեն լուծվում, բայց և այնպես, մենագրությունը լուրջ քայլ է մեր պատմագրության մնչ տեղ գտած այդ բացը լրացնելու ուղղությամբ։ Գիրքը կարդացվում է հետաքրքրությամբ. այն մի կողմից մեղադրական ակտ է Թուրքական զավթիչների և արևմտյան իմպերիալիստների նկատմամբ, իսկ մյուս կողմից ձոն՝ հայ ժողովրդի ազատագրական պայքարի մարտիկներին և հատկապես ազգային հերոս Անդրանիկին։ Անդրանիկը ամենուրեք է. թե Էրզրումի համար մղվող ծանր մարտերում, թե Զանգեզուրում ու Նախիջևանում։ Եվ ամենուրեք նա վեհ է ու մարդկային, նա ոչ միայն զորավար է, այլև մեծ հումանիստ։ Անդրանիկը չի կարող տարբերություն ու խտրություն դնել հայ և Թուրք աշխատավորների միջև, ուստի ամեն մի գյուղ կամ նոր շրջան մտնելիս, նա իր զորքերին հրամայում է չնեղացնել աշխատավոր ու խաղաղ մահմեդականներին։ «Թուրք խաղաղ բնակչության դեմ ոչ մի ոխ չունեմ, ես կռվում եմ միայն բեկերի և կառավարության դեմ»,— ասում էր Անդրանիկը։

«Արքաքը կամուրջներ չի հանդուրժում»,— ասում էին հնում և դրանով իսկ ընդգծում հայ ժողովրդի ազատաշունչ ոգին։ Այդպես էր դրությունը նաև 1918—1920 թթ., երբ հայ ժողովուրդը, նրա լավագույն զավակները, չհանդուրժելով և ոչ մի ստորացում ու բռնություն, նշավակում էին դաշնակցականներին՝ երիտթուրքերի հետ համագործակցելու համար, մերժում Բաթումի դաշնագիրը և զենքը ձեռքին շարունակում պայքարը նենգ թշնամու դեմ։ Պայքարի մարտիկները շեշտում էին, որ հայ ժողովրդի միակ փրկությունը գալիս է հյուսիսից, որ միայն ռուս ժողովուրդը, սովետական իշխանությունը կարող է վերջ դնել Անդրկովկասում ստեղծված դժնդակ վիճակին։ Դրա համար էր, որ Անդրանիկը Նախիջևանի երկրամասը հայտարարում է սովետական

և իրեն ու իր զորամասը դնում սովետական իշխանության տրամադրության տակ՝ այդ մասին համապատասխան հեռագիր ուղարկելով Բաքվի Կոմունայի ղեկավար Սա. Շահումյանին։ «Անդրանիկը դուրս է եկել գյուղացիական Հայաստանի խորքերից և իր արյունով կապված է նրա հետ,— գրում էր «Իզվեստիան»՝ 1918 թ. հուլիսի 26-ին։—Նա զգայուն կերպով ունկնդրում է ժողովրդին տանջանք բերող հառաչանքը և կատարում է իր գործը։ Իրականում կատարում է իրեն ասպարեզ բերած գյուղացիության կամքը։ Եվ պատահական չէ նրա որոշումը՝ գործել Սովետական Ռուսաստանի կամքին համապատասխան։ Այդ որոշումը դարավոր ճնշումից ազատագրվող գյուղացիության որոշումն է, որն արդեն ճանաչել է իր թշնամիներին և բարեկամներին» (էջ 207)։

Հեղինակը, անդրադառնալով դաշնակցության գործունեությանը, վեր է հանում այդ կուսակցության քաղաքականության կործանարարությունը, ցույց տալիս, որ նրա ղեկավարները հայ ժողովրդի համար այդ ճակատագրական պահին ոչ թե մտածում էին Հայաստանի փրկության, այլ իրենց նեղ կուսակցական շահերի մասին։

Գրքի ամենահաջողված բաժիններից մեկը երրորդ գլուխն է, որն ամբողջությամբ նվիրված է Արևելյան Հայաստանի պաշտպանության համար 1918 թ. գարնանը մղված հերոսամարտերին։ Անհնարին է առանց հուզմունքի կարդալ Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի ճակատամարտերին նվիրված էջերը։ Եվ միանգամայն իրավացի է հեղինակը, երբ գրում է, թե «միայն ներքին հզոր ուժ և պայքարի մեծ ուղի անցած ժողովուրդը կարող է բազմապատկել իր բոլոր կարողությունները, ինքն իրեն գերազանցել և գոյատևման իրավունք նվաճել։ Ահա այդ վճռական պահին էլ հայ ժողովուրդն իր մեջ հաղթանակով ապրելու կարողություն գտավ» (էջ 131)։

Գրքում մեծ տեղ է հատկացված հայ ազատագրական պայքարին նաև Կիլիկիայում, Սևրի պայմանագրին ու նրա հետևանքներին, Արևելյան Հայաստանի վրա քեմալականների ագրեսիային։ Այդ բոլոր իրադարձություններին անդրադառնալիս հեղինակը կարողացել է համոզիչ փաստերով բացահայտել արևմտյան իմպերիալիստների իսկական դեմքը և ցույց տալ նրանց քաղաքականության կործանարարությունը հայ ժողովրդի համար։ Ավելի քան երկու միլիոն հայեր քաղաքակիրթ Եվրոպայի և Ամերիկայի աչքի առաջ զոհ գնացին թուրքական շարդարարներին։ Արևմուտքի իմպերիալիստական տերությունները, որոնք այնքան շատ ու շռայլ խոստումներ էին տվել հայ ժողովրդին, իրենց սեփական շահը հոգալով, «մոռացության» տվեցին, լքեցին իրենց «փոքր դաշնակցին»՝ նրա ձեռքը տալով լոկ մի թղթի կտոր։ Հեղինակը հակիրճ, բայց համոզիչ փաստերով ցույց է տալիս այն նոր ավերածությունները և եղեռնը, որ կատարեցին թուրք զավթիչները Կիլիկիայում ու Կարսում, Սարիղամիշում ու Ալեքսանդրապոլում և այլուր, այն էլ՝ Եվրոպայի լուռ հովանավորությամբ։ Եվ կշարունակվեր հայ ժողովրդի գողգոթան, եթե մեծ Հոկտեմբերի ազատաշունչ ոգին չթևածեր նաև Հայաստանում։ Հայ ժողովրդի ազատագրությունը մեծ Հոկտեմբերի արգասիքն է— սա է հեղինակի հավատամքը, և այդ միտքը անցնում է ամբողջ գրքի միջով՝ սկզբից մինչև վերջ։ Թե 1918 թ. դժնդակ օրերին, երբ հայությունը շնչահեղձ էր լինում Երևանի և Էջմիածնի շուրջը կծկված, թե 1920 թ. աշնանը, երբ քեմալական զավթիչները մոտեցել էին Արարատյան ոստանին, հայ ժողովուրդը միշտ իր հայացքը հառել է դեպի հյուսիս՝ այնտեղից սպասելով փրկարար օգնությունը։

Ն. Աղայանի այս մենագրությունը ոչ միայն պատմագիտական, այլև դաստիարակչական կարևոր նշանակություն ունի։

Գրքում կան որոշ թերություններ, հակասական մտքեր ու անհաջող ձևակերպումներ, բայց դրանք չեն նսեմացնում այն օգտակար աշխատանքը, որ կատարել է ակադեմիկոս Ն. Աղայանը։ Նրա աշխատությունը հիմնականում հաջողված գործ է, գրված մարքս-լենինյան դիրքերից և լուրջ ներդրում է սովետահայ պատմագիտության մեջ։

ՄԱԿԻՉ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր
ԷԴԻԿ ԶՈՀՐԱԲՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու